ցին հանել, յորժամ ազգայինքն ետուն արդուհալ թէ Սպասաւոր է նորա. և նոքա գրել ետուն թէ Գործակալ է և քէհեա, որ մնաց և նա անդ(*)։

Նա և զայս հպարտութիւն մեծ ծանիր, որ զվէզիր ասէին այլ ոչ դարձցի՝ մարգարէաբար ստութեան, որ կայր նա ի պատերազմն Մաճարի, պատճառ յուսոյ՝ եթէ էր ամ պատերազմ ձայնեցին եւ թէ վասն այսմ զօրքն զնայ սպանանելոց են։ Եւ յետ աւուրց տօնի Վերափոխման Սուրբ Աստուածածնի, առաքեաց վէզիրն զԻէնան փաշա զոմն, որ երբեմն զափուտան էր, եդ սէրէսքէր զի եկեալ պահեսցէ զՈւսկիւտար եւ զՀրջակայսն. և նա եկեալ՝ ձորս հարթեալ, խանդակս բացեալ և զամենայն լաղրմաթիք ըմբռնեալ տանէին ի բանել. և որք ընդդէմ նոցա գային յամենայն ազգաց՝ բանեցուցանէին, և զգինէվաճառսն ամենայն քաղաքիս յամենայն աւուր իբրև զերկաթակապ գործակալօք տանէին անդ։ Նաև յամենայն գլուխս ճանապարհացն դրունս մեծամեծս փայտեայ ճաղից շինէին, որ ասի պարմաղափի. և այս ամենայն անդէպ և ընդ վայր վասն ապստամբելոցն արարին զի մի եկեալ ասպատակեսցեն. բայց նոցա ոչ դիմանայր դրունքն և ոչ տունք, եթէ ի հիմանց ոչ տապալէին, և զամենայն քաղաքն սրոյ ճարակ տային։ Սակայն անիրաւութիւն բնակչաց տեղոյն և հարկատուից յաւուրսն յայնոսիկ, բայց այս խորհուրդ՝ եթէ զայս լսելով երկիցեն, ասէ, հեռասցին և կամ հնազանդեսցին՝ տեսանելով զպատրաստութիւնս։ Եւ թէ ո՞յք են ա-

(*) Լուս. Աստ գրեա՝ Զչի պահոցն (13 Oqus.) գալուստ Մարտիրոս վարդապետին ի Կաֆայ և Դչի Աճածնին (18 Oqus.) գնալն ի դէմ վէզիրին առ ի Պէլրզատ գանկատ ցունաց՝ վասն Երուսաղէմի։